ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

1983 թվականի հունվարի 4—7 օրերին, Ս. Ծննդյան տոների կապակցությամբ, վրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Անանիա վրդ. Արաբաջյանի և թեմական խորհրդի հրավերով, այցելեց Բաքու: Այս առիթով Տ. Գևորգ եպիսկոպոսին ուղեկցում էին՝ Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցու գործադիր մարմնի նախագահ տիկին Ռուվաննա Մելքումյանը, Տ. Դավիթ քհն. Զելվեյանը և տիար Վիլլի Գրիգորյանը:

Հունվարի 4-ին, առավոտյան, Բաքվի երկաթուղային կայարանում Տ. Գևորգ եպիսկոպոսին և նրան ուղեկցող անձանց դիմավորում և բարի գալուստ են մաղթում Տ. Անանիա վարդապետ Արաբաջյանը, Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վարդան աբեղա Դիլանյանը, եկեղեցական խորհրդի նախագահ տիար Հրանտ Պետրոսյանը և մի խումբ հայ հավատացյալներ:

Նույն օրը, ժամը 12-ին, Տ. Գևորգ եպիսկոպոսը, ուղեկցությամբ Տ. Անանիա վարդապետի, քաղաքավարական այցելություն է տալիս Ադրբեջանի Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի լիազոր տիար Աբդուլլա Ախադովին: Սրբազանը հարգելի լիազորին փոխանցում է Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի ողջույնը:

Հունվարի 5-ին Տ. Գևորգ եպիսկոպոսը այցելում է մահմեդականների հոգևոր կենտրոն և ընդունվում Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր կենտրոնի մուֆթի Հաջի Իսմայիլ Ախմեդովի կողմից: Այնուհետև սրբազան հայրը այցելում է տեղի ռուս պրավոսլավ եկեղեցի և ընդունվում հոգևոր հովիվ Տ. Պավլին վարդապետի կողմից:

Նույն օրը, երեկոյան, Տ. Գևորգ եպիսկոպոսը Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մասնակցում է Քրիստոսի Ծնընդյան և Աստվածահայտնության օրվա առիթով կատարվող ճրագալույցի ս. պատարագին:

Պատարագիչն է Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը: «Հայր մեր»-ից առաջ ընթերցվում է Հայոց Հայրապետի Ս. Ծննդյան տոնի առթիվ ուղարկած օրհնության գիրը: Ապա հավատացյալներին օրհնության խոսք է ուղղում Տ. Գևորգ եպիսկոպոսը:

Հաջորդ օրը, հունվարի 6-ի առավոտյան, Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության ս. օրվա առթիվ Բաքվի հայոց եկեղեցում բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ ս. պատարագ է մատուցում Տ. Գևորգ սրբազանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Տ. Անանիա վարդապետը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» բնաբանով:

Ապա տեղի է ունենում Զրօրհնեքի արարողությունը:

Նույն օրը, ժամը 16-ին, Ադրբեջանի հայոց թեմի թեմական խորհուրդը «Մոսկվա» հյուրանոցում, ի պատիվ Տ. Գևորգ եպիսկոպոսի և նրան ուղեկցող անձանց, տալիս է պաշտոնական ճաշկերույթ, որին հրավիրվում են Բաքվի կրոնական համայնքների ներկայացուցիչներ, եկեղեցական խորհրդի գործադիր մարմնի անդամներ և պաշտոնական այլ անձինք:

Ճաշկերույթին ներկա են լինում նաև Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր տիար Աբդուլլա Ախադովը և նրա տեղակալ տիար Սեմյոն Խլեպովոյը: Ճաշկերույթի ընթացքում արտասանվում են ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքեր, շնորհավորանքներ և բարեմաղթություններ Ս. Ծննդյան տոնի առթիվ:

Հաջորդ օրը, հունվարի 7-ին, վրահայոց

թեմի պատվիրակությունը այցելում է Սուրաիանի հնադարյան ատրուշանը:

Ժամը 15-ին Տ. Գևորգ եպիսկոպոսը հրաժեշտի այցելություն է տալիս կրոնական գործերի լիազոր Ա. Ախադովին և հայտնում նրան իր շնորհակալությունը՝ ադրբեջանական հողի վրա վրահայոց թեմի պատվիրակության նկատմամբ ցուցաբերված ջերմ ընդունելության համար:

Նույն օրը, երեկոյան, պատվիրակությունը Տ. Գևորգ եպիսկոպոսի գլխավորությամբ մեկնում է Թբիլիսի:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հոկտեմբերի 17-ին, կիրակի օրը, Լոնդոնի հայոց Ս. Պետրոս եկեղեցում, ի ներկայության Լոնդոնի Եկեղեցական Համայնքային խորհրդի ներկայացուցիչների և լոնդոնահայ բազմաթիվ հավատացյալների, տեղի է ունեցել սարկավագների և դպիրների ձեռնադրություն՝ ձեռամբ Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և հոգևոր առաջնորդ Տ. Եղիշե եպիսկոպոս Կիլիրյանի: Սարկավագ են ձեռնադրվել ուրարակիրներ Ստեփան Տեր-Պողոսյանը և Հրայր Տեմիրճյանը, իսկ դպրության չորս աստիճաններ են ստացել Ռուբեն Տիգրանյանը, Լևոն Ստեփանը, Սևան Ստեփանը, Շահե Ուզունյանը, Վահագն Որբերյանը, Շիրակ Վարդանյանը, Գառլո Տիլանջյանը, Ռաֆֆի Ուզունյանը, Նժդեհ Մանվելյանը և Արմեն Օվանեսյանը:

Երկար տարիներից ի վեր առաջին անգամն է, որ այսպիսի մի ուրախալի դեպք է պատահում լոնդոնահայ գաղութում: Ս. Պետրոս եկեղեցու բացման օրից առաջին անգամն են նրա կամարների տակ հնչում ձեռնադրության աղոթքներն ու շարականները: Տարիներ առաջ, երբ Ս. Պետրոս եկեղեցին հանձնվում էր հայ համայնքին, լոնդոնահայությունը այն վերցնում էր որպես ազգային եկեղեցի՝ բավարարելու մեծացող լոնդոնահայության հոգևոր պահանջները: Ոմանք գուցե ավելորդ էին համարում մի այդպիսի հսկայածավալ եկեղեցու ստանձնումը: Եկեղեցին եկեղեցի է որպես ապրող ու գործող ժողովուրդ՝ համայնք: Կատարված սարկավագական ձեռնադրությունը և դպրության աստիճանի տվչությունը գալիս է հաստատելու, որ լոնդոնահայ համայնքը հետաքրքրվում է իր եկեղեցով, սիրում է այն և պատրաստ է ծառայելու, գոհաբերություն անելու իր եկեղեցուն՝ քաջ գիտակցելով Հայ Եկեղեցու անհրաժեշտությունը ամուր հավատքով և ազգային գիտակցությամբ մեծացող նոր սերունդ պատրաստելու համար:

Ստեփան և Հրայր սարկավագները երկար տարիներ ծառայել են Հայ Եկեղեցուն կիպրահայ գաղութում: Տեղափոխվելով Լոնդոն՝

Մի պահ սարկավագական ձեռնադրությունից

երկար տարիներ նրանք նույն սիրով ու նվիրումով մատուցել են նույն ծառայությունը Ս. Սարգիս և Ս. Պետրոս եկեղեցիներում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նրանց սարկավագական ձեռնադրությունը և մաղթում, որ նրանք հետ այսու առավել նվիրումով ու գիտակցությամբ շարունակեն իրենց աշխատանքը ի մխիթարություն հայ հավատավոր հոգիների, օրինակ ծառայելով հատկապես այն մատաղ հայորդիներին, որոնք ստանալով դպրության աստիճանը՝ իրենց առաջին քայլերն են անում հայ հավատքի տաճարից ներս:

ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

«Եկայք շինեսցաք սուրբ վխորանն լուսոյ,
Քնապի ի սմա ծագեաց մեզ լոյս»...

Բոլորովին վերջերս, հայրենի հողից կըտրված մի բուռ հայեր հեռավոր Ֆրանսիայի Ռոն Ալպ շրջանի Պոն դը Շերի քաղաքում կառուցել են հայկական ճարտարապետական ոճով մի հոյակերտ եկեղեցի, որը կոչվել է Սուրբ Նշան անունով:

Ուխտի ու բերկրանքի օր է եղել նոյեմբերի 7-ը Լիոնի և նրա շրջակայքի հայության համար: Այդ օրը Ս. Նշան նորակառույց եկեղեցու բակում հավաքվել են մեծ թվով հայեր՝ ներկա լինելու եկեղեցու նավակատիքի և օծման արարողությանը:

Առավոտյան ժամը 10-ին տեղի է ունեցել եկեղեցու «Դռնբացէք»-ի արարողությունը, որն ուղեկցվել է «Բաց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան» շարականի երգեցողությամբ և հավուր պատշաճի աղոթքների ընթերցմամբ: Այնուհետև կատարվել է սրբալույս մյուռոնով եկեղեցու խորանի և ութ սյուների օծումը:

Արարողությանը նախագահել է Արևմըտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը:

Արարողությանը մասնակցել են նաև հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագաշյանը, Մարսելի փոխանորդ Տ. Հակոբ եպս. Վարդանյանը, Լիոնի փոխանորդ Տ. Նորվան եպս. Զաքարյանը և քահանայից դասը:

Քույր եկեղեցիներից արարողությանը ներկա են եղել Լիոնի հունաց առաջնորդ Տ. Վլասիոս եպիսկոպոսը և Լիոնի արքեպիսկոպոս Դը Քուրթրեի ներկայացուցիչ հայր Կլեմանը, ինչպես նաև հայ կաթողիկե համայնքի ներկայացուցիչ Տ. Հովսեփ վրդ. Լևոնյանը և ավետարանական համայնքի ներկայացուցիչ վերապատվելի Ռընե Լևոնյանը:

Մի պահ եկեղեցու օծման արարողությունից

Պոն դը Շերիի նորակառույց Ս. Նշան եկեղեցին

Արարողությանը հրավիրվել են նաև Ազգային ժողովի նախագահ Լուի Մերմայը, շրջանի քաղաքապետները և պաշտոնական այլ անձինք:

Եկեղեցու օծման սրբական արարողությունից հետո մատուցվել է անդրանիկ ս. պատարագը, որի ընթացքում բազմաթիվ հայ հավատացյալներ հաղորդություն են ստացել: Օրվա պատարագիչն է եղել Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբական հայրը նախ կարդացել է Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը, ապա արտասանել է ոգեշունչ մի քարոզ: Նա մասնավորապես շեշտել է. «Եկեղեցաշինությունը հայուն նկարագրին անբաժան մեկ մասը եղած է: Իսկ եկեղեցիներն ու անոնց կից կառուցված վանքերը եղած են ոչ միայն աղոթավայրեր, այլև գիտության և ուսումի կարևոր կեդրոններ: Մեզի շատ բան պակսած է. պակսած է հաց, հող բայց մեկ բան բնավ չէ պակսած՝ մեր հավատքը»: Քարոզիչ սրբազանն այնուհետև անդրադարձել է եկեղեցու գլխավոր բարերար տիար Ճիպրայել Պահատուրյանի եկեղեցաշեն գործունեությանը՝ բարձր գնահատելով նրա երկարամյա ազգօգուտ ծառայությունը և մաղթելով նրան արևոտ երկար տարիներ:

Պատարագից հետո եկեղեցուն կից «Պահատուրեան» սրահում ներկաների համար կազմակերպվել է հյուրասիրություն, որն անցել է շատ ջերմ ու հայաշունչ մթնոլորտում:

Հյուրասիրության ընթացքում, հանուն Ս. Նշան եկեղեցու կառուցման հանձնախմբի, ելույթ է ունեցել նախագահ Արիս Խաչատուրյանը և շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր սպտար են հանդիսացել եկեղեցու կառուցմանը:

Այնուհետև խոսք է առել Լիոնի և համայն Ռոն Ալպի հոգևոր առաջնորդ Տ. Նորվան եպս. Զաքարյանը, որը մասնավորապես նշել է.

«Եկեղեցին որքան ալ գեղեցիկ կառուցված ըլլա, կմնա պարզ քար, պարզ սյուն, պարզ մարմին, եթե երբեք պակսի կենսականը, այսինքն՝ հոգին: Ուրեմն շունչ տանք այս կամարներուն, արժևորենք մենք մեզ, վերանորոգենք մեր հավատքը՝ ամեն առիթի հաճախելով այս կառույցը»:

Գեղեցիկ այս ընդունելությունը ավարտվել է Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի եպրափակիչ խոսքով ու գոհաբանական աղոթքով: